ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2019թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-256-13.08.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1203- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-256-13.08.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ, համաձայն որի նշված մասով նախատեսված լիազորագրերը հաստատվում են անվճար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր ստացողն աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ: Նույն հոդվածի 3-րդ մասում թվարկված են նոտարի վավերացված լիազորագրերին հավասարեցված՝ համապատասխան անձանց կողմից վավերացված լիազորագրերը:

Ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում նախագծով առաջարկվող կարգավորումը, սակայն հարկ ենք համարում նշել, որ համապատասխան սուբյեկտների կողմից հաստատված և նոտարի կողմից վավերացված լիազորագրերին հավասարեցված լիազորագրերն անվճար հաստատվելու վերաբերյալ դրույթը հավասարապես վերաբերում է նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված լիազորագրերին, ուստի առաջարկում ենք նույն կարգավորումը նախատեսել նաև օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվականի N 1203 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-256-13.08.2019-ՊԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 28
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասում.

1) «լիազորագիր ստացողն» բառերը փոխարինել «լիազորողը» բառով,
2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով նախատեսված լիազորագրերը հաստատվում են անվճար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Առկա խնդիրները

Սույն նախաձեռնության հիմք են հանդիսացել քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, որտեղ հանգամանորեն ներկայացրել են խնդրո առարկա իրավակարգավորման (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 321-րդ հոդվածի 4-րդ մաս) գործնական առումով առաջացնող խնդիրները:

Օրենսգիրք 321-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ **լիազորագիր ստացողն** աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:

Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը **տալիս է այլ անձի՝** երրորդ անձանց առջև ներկայացվելու համար, իսկ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ նոտարի վավերացրած լիազորագրերին հավասարեցվում են՝

1) հոսպիտալներում, առողջարաններում և զինվորական այլ բուժական հաստատություններում բուժման մեջ գտնվող զինծառայողների ու մյուս անձանց լիազորագրերը՝ վավերացված այդ հաստատության պետի, բուժական մասի գծով նրա տեղակալի, ավագ կամ հերթապահ բժշկի կողմից.

2) զինծառայողների լիազորագրերը, իսկ զորամասերի, զորամիավորումների, զինվորական հաստատությունների և ռազմաուսումնական հաստատությունների տեղաբաշխման այն վայրերում, որտեղ չկան նոտարական գրասենյակներ ու նոտարական գործողություններ կատարող այլ մարմիններ, ինչպես նաև բանվորների և ծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողների ընտանիքների անդամների լիազորագրերը՝ վավերացված այդ

զորամասերի, զորամիավորումների, զինվորական հիմնարկների կամ հաստատությունների հրամանատարի (պետի) կողմից.
3) ազատազրկման վայրերում գտնվող անձանց լիազորագրերը՝ վավերացված ազատազրկման համապատասխան հաստատության պետի կողմից.
4) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվող չափահաս գործունակ քաղաքացիների լիազորագրերը՝ վավերացված նման հաստատության տնօրինության կամ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կողմից:

Օրենսգրքի 323-րդ հոդվածից ակնհայտ է նաև, որ **լիազորագիր ստացած** անձը պետք է անձամբ կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է: Լիազորություններն այլ անձի փոխանցողը պետք է այդ մասին տեղեկացնի **լիազորողին** և նրան անհրաժեշտ տեղեկություններ հաղորդի այն անձի վերաբերյալ, ում փոխանցված են լիազորությունները:

Օրենսգրքի այս իրավակարգավորումների համակարգային ուսումնասիրման արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ **լիազորագիր ստացողն** այն անձն է, որը ստանում է լիազորողի (լիազորագիր տվողի) գրավոր լրազորությունը երրորդ անձանց ներկայացնելու համար: Տվյալ դեպքում, Օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասի շարադրանքից ակնհայտ է, որ լիազորողը այն անձն է, այսինքն՝ լիազորագիր տվողը, որը գտնվում է հոսպիտալում, առողջարանում և զինվորական այլ բուժական հաստատությունում բուժման մեջ, կամ զինծառայող է կամ ազատազրկման վայրում գտնվող անձ է, որի լիազորագիրը վավերացնում է այդ հաստատությունների ղեկավարների կողմից: Հետևաբար, լիազորագիր ստացողն այն անձն է, որը ստանում է գրավոր լիազորությունը 321 հոդվածի 4-րդ մասով սահմանված հաստատություններում գտնվող անձանցից (լիազորողից) այլ (երրորդ) անձանց ներկայացնելու համար: Ի տարբերություն 321 հոդվածի 4-րդ մասի, օրենսդրի կողմից մնացյալ դեպքերում հստակ նշվել է, թե ով է լիազորողը և ով լիազորագիր ստացողը:

Օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավակարգավորումը կարծես թե վերը նշված իրավանորմերի համատեքստում որևէ խնդիր չի առաջացնում, այնինչ թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով այն խոչընդոտներ է առաջացնում այդ մասով ամրագրված աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ

(դրամական և ծանրոցային) ստանալու այդ թվում՝ սեփականության իրավունքի իրացման համատեքստում:

Օրինակ՝ կենսաթոշակառուն, կամ որևէ այլ անձ, որը գտնվում է ստացիոնար բուժման մեջ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում և չի կարող ինքնուրույն ստանալ ծանրոցներ, դրամական փոխանցումներ կամ կենսաթոշակ, կարող է իր փոխարեն այդ գործողություններն իրականացնելու համար լիազորել որևէ անձի, սակայն 321-րդ հոդվածի 4-րդ մասի նման ձևակերպման պարագայում զրկված է այդ գործողություններն իրականացնելու հնարավորությունից, քանի որ Օրենսգրքում առկա ձևակերպումներից ելնելով նա հանդիսանում է **լիազորագիր ստացող, ոչ թե տվող**: Այդ խնդիրը պայմանավորված է նրանով, որ նշված հոդվածի 4-րդ մասում կիրառվում է «լիազորագիր ստացող» բառերը «լիազորագիր տվող»- ի կամ «լիազորող»-ի փոխարեն:

321-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ լիազորագիր ստացողն աշխատում, սովորում կամ գտնվում է բուժման մեջ այդ հաստատություններում, ինչն անտրամաբանական է:

Հարկ է նկատել, որ լիազորագրերի հետ կապված համանման իրավակարգավորումներ, (որոշ առանձնահատկություններով) ամրագրված են նաև Ռուսաստանի Դաշնության (Քաղաքացիական օրենսգիրք 185.1 հոդված մաս 3.), Ղազախստանի (Քաղաքացիական օրենսգիրք 167. հոդված, մաս 4.), Ուկրաինայի (Քաղաքացիական օրենսգիրք, 245 հոդված, 4-րդ մաս) և Մոլդովայի (Քաղաքացիական օրենսգիրք, 252 հոդված, մաս 5) և այլ պետությունների քաղաքացիական օրենսգրքերով և/կամ ոլորտի օրենսդրությամբ[1], սակայն ի

---

[1] Տե՛ս "Гражданский кодекс Российской Федерации (часть первая)" от 30.11.1994 N 51-ФЗ (ред. от 03.08.2018, с изм. от 03.07.2019) (с изм. и доп., вступ. в силу с 01.06.2019) Статья 185. Общие положения о доверенности «....3. Доверенность на получение заработной платы и иных платежей, связанных с трудовыми отношениями, на получение вознаграждения авторов и изобретателей, пенсий, пособий и стипендий или на получение корреспонденции, за исключением ценной корреспонденции, может быть удостоверена организацией, в которой доверитель работает или учится, и администрацией стационарного лечебного учреждения, в котором он находится на излечении. Такая доверенность удостоверяется бесплатно.» http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=312579&fld=134&dst=1000000001,0&rnd=0.18654454847901691#08483525272325625,

Гражданский кодекс Республики Казахстан (Общая часть), принят Верховным Советом Республики Казахстан 27 декабря 1994 года (с изменениями и дополнениями по состоянию на 01.07.2019 г.) Статья 167. Доверенность: «... 4. Доверенность на получение корреспонденции, в том числе денежной и посылочной, на получение заработной платы и иных выплат от граждан и юридических лиц может быть удостоверена местными исполнительными органами городов республиканского значения, столицы, районов, городов областного значения, акимами города районного значения, поселка, села где проживает доверитель, организацией, в которой он работает или учится, жилищно-эксплуатационной организацией по месту жительства, администрацией стационарного лечебного учреждения, в котором он находится на излечении, а также командованием соответствующих воинских частей, когда доверенность выдается военнослужащим. Доверенность, посылаемая

տարբերություն Օրենսգրքի վերը նշված խնդրահարույց դրույթի, հստակ սահմանվում է, որ իրավասու հաստատությունների ղեկավարի կողմից հաստատվում կամ վավերացվում է այդտեղ ***սովորող, աշխատող, բուժվող անձանց, այսինքն՝ լիազորողների փված լիազորագրերը:***

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.10.2010թ.ի թիվ ՍԴՈ-1050 որոշմամբ անդրադառնալով լիազազորագրերի խնդրին՝ նշում է. «Անդրադառնալով խնդրո առարկա իրավակարգավորումների շրջանակներում «լիազորագիր» ինստիտուտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա նորմերի կիրառելիության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասն առանձնացնում է այն սուբյեկտներին, որոնց կողմից տրված լիազորագրերը հավասարեցված են նոտարի կողմից հաստատվող լիազորագրերին: Ավելին, նույն հոդվածի 4-րդ մասը հատուկ իրավակարգավորում է նախատեսում որոշակի դեպքերի, այդ թվում՝ կենսաթոշակ ստանալու լիազորագրի վերաբերյալ: **Համաձայն այդ նորմի՝ կենսաթոշակ ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ կենսաթոշակառուն աշխատում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:»:**

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը նպատակ ունի լուծել այն օրենդրական խնդիրը, որը սահմանափակում է Օրենսգրքով ամրագրված իրավունքների իրացումը: Օրենսգրքի 321-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված սուբյեկտների կողմից աշխատավարձ և

по телеграфу, а также по другим видам связи, когда отправку документа осуществляет работник связи, удостоверяется органами связи.» https://online.zakon.kz/document/?doc_id=1006061#pos=2125;-53&sdoc_params=text%3D%25D0%25B4%25D0%25BE%25D0%25B2%25D0%25B5%25D1%2580%25D0%25B5%25D0%25BD%25D0%25BD%25D0%25BE%25D1%2581%25D1%2582%25D1%258C%26mode%3Dindoc%26topic_id%3D1006061%26spos%3D1%26tSynonym%3D1%26tShort%3D1%26tSuffix%3D1&sdoc_pos=7

Гражданский кодекс Украины от 16 января 2003 года № 435-IV (с изменениями и дополнениями по состоянию на 28.02.2019 г.) Статья 245. Форма доверенности «... 4. Доверенность на получение заработной платы, стипендии, пенсии, алиментов, других платежей и почтовой корреспонденции (почтовых переводов, посылок и т. п.) может быть удостоверена должностным лицом организации, в которой доверитель работает, учится, находится на стационарном излечении, или по месту его жительства.» https://online.zakon.kz/Document/?doc_id=30418568#pos=1670;-46

Гражданский кодекс Республики Молдова: Кодекс Nr. 1107 от 06.06.2002, в Monitorul Oficial Nr. 82-86,
Статья 252. Доверенность «... (5) Доверенности на получение заработной платы или иных платежей по месту работы, пенсий, пособий, стипендий, корреспонденции, исключая посылки и денежные переводы, могут быть удостоверены администрацией по месту работы или учебы лица, выдавшего доверенность, или администрацией лечебного учреждения, в котором находится на излечении лицо, выдавшее доверенность.[Ст.252 ч.(5) изменена ЗП133 от 15.11.18, МО467-479/14.12.18 ст.784] » http://lex.justice.md/index.php?action=view&view=doc&lang=2&id=313291

աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական և ծանրոցային, ստանալու իրավունքների իրացումը, լիազորագրի հիման վրա, պետք է անարգել իրականացվի:

2. Առաջարկվող կարգավորումները

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է՝

1. 321-րդ հոդվածի 4-րդ մասում «լիազորագիր ստացողն» բառերը փոխարինել «լիազորողը» բառով և
2. նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն մասով նախատեսված լիազորագրերը հաստատվում են անվճար:»:

3. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող օրենքի ընդունման արդյունքում 321-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված սուբյեկտները կկարողանան լիարժեքորեն իրացնել իրենց իրավունքները, կվերանա օրենդրական այն խոչընդոտը, որը օրենքով ամրագրված իրավունքների իրացման ոչ իրավաչափ սահմանափակում է հանդիսանում:

Միաժամանակ, անձինք պաշտպանված կլինեն իրենց իրավունքների իրացման համար ոչ իրավաչափ որևէ վճար կատարելու պահաջներից կամ պահաջի փորձից: Այս առումով, օրենքով այդ դրույթի ամրագումը ևս չարաշահումների արգելքի հիմք կհանդիսանա: